



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

7 փետրվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Գյուլումյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Հ. Նազարյանի

Քննության առնելով Ավետիս Ափիյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Ավետիս Ափիյանը 2020 թվականի հունվարի 21-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ 2018 թվականի ապրիլի 9-ին ուժի մեջ մտնելուց հետո վիճարկվող իրավական ակտը՝ դատախազների արտահերթ ատեստավորում անցկացնելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի փետրվարի 7-ի թիվ 10-Ա հրամանը, և դրա կիրառումը ճանաչել ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի 57-րդ

հողվածի 2-րդ մասին, 63-րդ հողվածի 1-ին մասին և 1-ին գլխի 5-րդ հողվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

2. Դիմողի համոզմամբ քննության առարկա հրամանի և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հողվածի 4-րդ մասի միջև առկա է հակասություն. հրամանը կայացվել է ուժը կորցրած օրենքի հիման վրա, ըստ որի՝ արտահերթ ատեստավորումն անցկացվում է գլխավոր դատախազի հրամանով, մինչդեռ նոր օրենքով այդ գործողության համար պարտադիր է պատճառաբանված որոշում: Հետևաբար, գլխավոր դատախազը, եթե նույնիսկ չի համարել, որ իր կողմից ընդունված իրավական ակտն օրենքի ուժով արդեն իսկ ուժը կորցրած է եղել, պարտավոր էր նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 09.04.2018թ., անմիջապես որոշում կայացնել իր հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին, ինչը չի արել, որի հետևանքով խախտվել է արտահերթ ատեստավորվող դատախազների իրավունքը՝ ատեստավորման գնալ պատճառաբանված որոշմամբ:

Դիմողը գտնում է, որ Գլխավոր դատախազի 2018 թվականի փետրվարի 7-ի հրամանը՝ որպես իրավական ակտ, անվավեր, առ ոչինչ հանդիսացող իրավական ակտ է, քանի որ այն դատախազության կողմից կիրառվել է օրենքի խախտմամբ, իսկ վերաքննիչ վարչական և վճռաբեկ դատարանները, անտեսելով կամ սխալ մեկնաբանելով օրենքը, ուժը կորցրած, անվավեր իրավական ակտը (հրամանը) դրել են իրենց ակտերի հիմքում, որի հետևանքով կայացվել են անհիմն և անօրինական ակտեր, որով կոպտորեն ոտնահարել են դիմողի հիմնարար իրավունքները:

3. Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հողվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմողը բարձրացնում է իր հանդեպ կիրառված ՀՀ գլխավոր դատախազի հրամանի և վերջինիս կիրառման սահմանադրականության հարց:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, **Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի** համապատասխանությունը Սահմանադրությանը:

Գլխավոր դատախազի քննության առարկա հրամանը ունի ժամանակավոր բնույթ, նախատեսված է մեկանգամյա կիրառման համար, իրավական նորմ չի պարունակում և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձանց, հետևաբար, այն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ չէ և ենթակա չէ քննության Սահմանադրական դատարանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Ավետիս Ափիյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝



7 փետրվարի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-5